ԽՈՋԵՆԻ.– (Նայելով դէպի ձախ) Մեծ ապեր, մեծ ապեր, էն ո՞վքեր են: (Ցոյց է տալիս ձախ կողմը:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հը՛ա՛ամ,

ՏԷՐՏԷՐ.– Ա՛ման, Քաջ Նազա՛րն է:

ՀՍԿԱՆԵՐ.– Հը՛ա՛մմմ…(Սարսափում են:)

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Բեե՛ռդը մտէք, (Վազում է ամրոցը, միւսները հետեւում են նրան:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.— (Գրկած փախցնում է տէրտէրին:)

Բոլոր հսկաները պահւում են ամրոցի մէջ: Ձախից ներս են մտնում Նազարը, թամադան, առոյգ ծերուկը, Սաքոն, վարդապետը եւ միւս գիւղացիները:

ՄԻ ԳԻՒՂԱՑԻ.– Ախպեր, էս մեր տէրտէրը գնաց հսկաներին գտնելու ինքը ո՞ւր կորաւ:

ՎԱՐԺԱՊԵՏ.– Գնա՛ց շահատակ, ընկա՛ւ նահատակ: Հայրենեա՛ց համար: Յառա՛ջ..,

ԹԱՄԱԴԱ.– է, լաւ, տէրտէրը կորաւ: Բա հսկանե՞րն ուր կորան:

ՆԱԶԱՐ.– Հսկաները կորչե՞ն: Գլուխներդ կջարդեմ, թէ կորցրել էք: Քաջ Նազար էք բերում էստեղ ու հսկա էք կորցնո՞ւմ: (Սաքոյին) Գեադա, շուտ գնա բեր էդ հսկաներին: (Միւսներին) Գնացէք գտէ՛ք: Գտաք թէ չէ ինձնից հրաման, վրայ տուէք, ինձ մի նայէք: Ես գիտեմ իմ անելիքը: Իմացա՞ք, Դէ, գնացէ՛ք:

ՎԱՐԺԱՊԵՏ.– Սաքո, գնա՛:

ՍԱՔՈ.– էս սհաթին (Կրունկի վրայ պտոյտ է գործում եւ կանգնում տեղնուտեղը: միւսներին) Գեադէ՛ք, գնացէ՛ք:

ՄԻԻՍՆԵՐԸ.– (Դրսից ուրիշներին) Գեադէ՛ք, գնացէ՛ք,

ԲՈԼՈՐԸ.– (Կանգնած են իրենց տեղը եւ ոչ ոք չի գնում:)

ԹԱՄԱԴԱ.– Էհ, հապա մի նստի, որդի, հաց անուշ անենք:

ՎԱՐԺԱՊԵՏ.– Նստի՛ր, հերոս, նստի՛ր: Թող քաջութեանդ կատաղութիւնը իջնի պահ մի:

ԹԱՄԱԴԱ.– Գինու տիկը բերէք:

Բերում են դնում Նազարի, թամադայի, վարժապետի եւ մի երկուսի առջեւ: Սրանք նստում են եւ սկսում են ուտել խմել:

ԹԱՄԱԴԱ.– (Գոռում է) Է՛յ, հսկանե՛ր, ո՞ր ծակն էք մտել… Հիմի՛ դուրս արիք, է՛…

ՆԱԶԱՐ.– Կամա՛ց, մի՛ գոռա, չփախչեն: